ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 24-ից 26-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Դավիթ Խուդաթյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**

   Վրաստան, ք. Թբիլիսի, նոյեմբերի 24-26-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Այցը կայացել է երկկողմ պայմանավորվածության հիման վրա

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>**

   Գործընկեր նախարարների հետ երկկողմ հանդիպումներ

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Քննարկման հիմնական ուղղությունները.

   - Տարածքային կառավարման և ապակենտրոնացման քաղաքականություն.

   Կողմերն անդրադարձել են ապակենտրոնացման գործընթացներին, համայնքներին ռեսուրսների առավել արդյունավետ ուղղորդման մեխանիզմներին և տեղական ինքնակառավարման լիազորությունների ընդլայնման հարցերին:

   -Համայնքների խոշորացման փորձ.

   Վրացական կողմը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի համայնքների խոշորացման փորձի նկատմամբ՝ ուսումնասիրելով դրա ազդեցությունը կառավարման արդյունավետության, ծառայությունների որակի և տարածքային զարգացումների վրա:

   -Համայնքային ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում.

   Նախարարները տեղում իրականացրել են փորձի փոխանակում՝ քննարկելով համայնքային ենթակառուցվածքային ծրագրերի պլանավորման, իրականացման, վերահսկողության և մշտադիտարկման գործիքներն ու մոտեցումները: Ընդգծվել է ծրագրերի թափանցիկության և արդյունքահեն կառավարման կարևորությունը:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Երկկողմ այցով Վրաստանում գտնվելու ընթացքում ընդլայնված կազմով հանդիպում է կայացել նախարար Ռ. Սոխաձեի հետ: Քննարկվել է ենթակառուցվածքների՝ մասնավորապես ջրային և ճանապարհային ոլորտի ենթակառուցվածքներին առնչվող թեմաներ: Վրացական կողմը հետաքրքրություն է ցուցաբերել ջրերի կառավարման ոլորտում ՀՀ փորձի ուսումնասիրությամբ, հաշվի առնելով վերջին տարիներին գրանցված առաջընթացը: Խոսվել է թունելների շինարարության գործում հնարավոր մարտահրավերների մասին, որոնք հաճախ նույնն են երկու երկրների համար՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով եւ ռելիեֆով: Վրացական կողմն առաջարկել է առավել մանրամասն այս մասին խոսել տեղում՝ շինարարական տեղամասում: Քննարկումներն առավել առարկայական շարունակվել են Քվեշեթի այցի ընթացքում, որը կայացել է նոյեմբերի 25-ին: Դիտարկվել է Թունելը, ճանապարհի և կամրջի շինարարության ընթացքը:

2025թ. նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Վրաստանի տարածքային զարգացման նախարար Գուլեդանիի հետ, որի ընթացքում քննարկվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում համագործակցության մի շարք կարևոր հարցեր:

Այցի ընթացքում ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը նաև ծանոթացել է Քվեշեթի-Կոբի մայրուղու և թունելների շինարարական աշխատանքների ընթացքին: Նախագծի շրջանակներում կառուցվում է երկշերտ ասֆալտբետոնե ճանապարհ, կկառուցվի 5 կամուրջ և 5 թունել, ինչպես նաև կվերականգնվի մեկ կամուրջ: Նախագծի շրջանակներում կառուցվում է նաև բացառիկ կամարակապ կամուրջ, որը տարածաշրջանում ամենաբարձր կամուրջն է լինելու:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի արդյունքներով ստորագրված փաստաթղթեր չկան:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ավարտին նախարար Դ. Խուդաթյանն առաջարկել է ստեղծել երկու երկրների համայնքապետերի շփումների հատուկ հարթակ, որը կծառայի Հայաստանի և Վրաստանի համայնքների միջև փորձի փոխանակման, գործընկերային կապերի խորացման և համատեղ նախագծերի խթանման նպատակով: Նախաձեռնությունը ստացել է վրացական կողմի դրական արձագանքը: Կողմերը պատրաստակամություն են հայտնել ամուր գործընկերության՝ այդպիսով օրինակ ծառայելով տարածքային և տեղական իշխանությունների գործընկերների համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

28 նոյեմբերի 2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 20.11.2025թ. 1059-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) ՀՀ ՏԿԵ նախարար Դ.Խուդաթյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը Վրաստան /Թբիլիսի/
5. Գործուղման ժամկետները 24.11-26.11.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ 2025թ. ՀՀ պետական բյուջեից
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանց չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով սահմանված գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Դավիթ Խուդաթյան	Ընդամենը
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	էկոնոմ դաս
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	102500	102500
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28226	0
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	*84677*	*84677*
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար		
Ընդամենը ծախսեր		*187177*	*187177*

1$= 381.43

01.12.2025թ.

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան
ստորագրություն